

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ

ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԻՆՉԵՎ 1920 ԹՎԱԿԱՆԸ

Պապիկյան Ս. (Հայկական էներգետիկական ակադեմիա, Հայաստան)

stepanpapikyan@yandex.ru

Բանալի բառեր` հիդրոէլեկտրակայան, գեներատոր, էլեկտրական էներգիա, տուրբին, կվտ/ժ, սակագին:

Հայաստանում XX դարի սկզբին շահագործվում էին 13 փոքր էլեկտրակայաններ` 3165 կվտ գումարային հզորությամբ: Տարեկան արտադրվում էր 5,1 միլիոն կվտ/ժ էլեկտրական էներգիա:

Հայաստանի առաջին հիդրոէլեկտրակայանների կառուցման փորձը վկայում է, որ մեծ ծախսերից խուսափելու համար ձգտել են հիմնականում օգտագործել գոյություն ունեցող ինժեներական կառուցվածքները, որոնք նախատեսված են եղել ոռոգման և ջրաղացների համար: Գետից ջրի առման համար քարերից պատրաստել են հասարակ պատվարներ (պատնեշ), որոնք շատ հաճախ գարնան ամիսներին ջրի վարարումների հետևանքով քանդվում և պարբերաբար վերանորոգվում էին:

Հիդրոէլեկտրակայաններում հիմնականում օգտագործում էին «Ֆրենսիս» տեսակի հորիզոնական կամ ուղղահայաց հիդրոտուրբիններ: էլեկտրակայաններում չափիչ-ստուգիչ սարքավորումներ գոյություն չունեին:

Այն ժամանակ դեռևս էլեկտրական էներգիայի միասնական սակագին գոյություն չունեին: Յուրաքանչյուր կայան ձգտել է էլեկտրական էներգիա մատակարարել այնպիսի սակագնով, որպեսզի վնաս չկրի: Միայն Երևանի հիդրոէլեկտրակայանի համար էլեկտրական էներգիայի սակագին հաստատվեց քաղաքային իշխանությունների որոշմամբ, բացառությամբ փողոցների լուսավորության համար մատակարարվող էլեկտրական էներգիայի: Այն վաճառվում էր տարեկան 100 ուրբլի յուրաքանչյուր 100 ամպերանոց աղեղային լամպի համար, և այն օգտագործվում էր

մթնշաղից մինչև լուսաբաց: Ջերմային էլեկտրակայանների համար 1 կվտ/ժ էլեկտրական էներգիայի արժեքը կազմում էր 50-60 կոպեկ: Արդյունաբերության համար մատակարարվող էլեկտրական էներգիան վաճառվում էր ամսական 10-15 ուղբլի յուրաքանչյուր կիլովատտ դրվածքային բեռի համար:

Կոմունալ-կենցաղային նպատակներով տրվող էլեկտրական էներգիայի 90 տոկոսն օգտագործվում էր լուսավորության համար: Հայաստանում էլեկտրական էներգիայի տարեկան սպառումը կոմունալ-կենցաղային նպատակի համար չի գերազանցել 500 հազար կվտ/ժ-ը:

Գյուղական վայրերում էլեկտրական էներգիայից չեն օգտվել ո՛չ աշխատանքի մեքենայացման, ո՛չ էլ լուսավորության համար: Էլեկտրակայաններում աշխատելու համար մարդկանց ընտրում էին՝ նկատի ունենալով նրանց ծանոթ լինելը փականագործության և հարակից մասնագիտությունների հետ: Հայաստանում չկային ո՛չ բարձրագույն, ո՛չ էլ միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություններ, որպեսզի կադրեր պատրաստեին էլեկտրակայաններում աշխատելու համար: Այդ տարիներին շահագործման անվտանգության տեխնիկայի վերաբերյալ գիտելիքները դեռևս գտնվում էին շատ ցածր մակարդակի վրա: Այդ պատճառով էլ հաճախ տեղի էին ունենում վթարներ, ինչի հետևանքով հոսանքահարվում էին աշխատողները, և շարքից դուրս էին գալիս էներգետիկ սարքավորումները:

Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում պղնձի արդյունահանումը Հայաստանում նվազեց, որն էլ իր հերթին բերեց էլեկտրական էներգիայի արտադրության կրճատմանը: Հայաստանում 1919 թ. արտադրվել է մինչև 2 միլիոն կվտ/ժ, իսկ 1920 թ.՝ մինչև 1 միլիոն կվտ/ժ էլեկտրական էներգիա:

1920 թ. Հայաստանի էլեկտրակայաններում աշխատող մարդկանց թիվը չի գերազանցել 65-ը: Այդ թվականին յուրաքանչյուր բնակչին բաժին էր ընկնում ընդամենը 3.2 կվտ/ժ էլեկտրական էներգիա:

THE PECULIARITIES OF DEVELOPMENT OF ENERGETICS IN ARMENIA UNTIL
1920

Papikyan S. (Armenian Academy of Energetics, Armenia)